

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետերերին

Մենք ստուգել ենք «Արցախ ՀԷԿ» ԲԲ Ընկերության հաշվապահական հաշվառման հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2008թ., ինչպես նաև առ 2008թ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը:

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք, ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը թեսային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի 31-ը դեկտեմբերի 2008թ., ինչպես նաև 2008թ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը համաձայն կից ներկայացվող վերը նշված ձևերի (հաշվապահական հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվություններ):

«Արցախ ՀԷԿ» ԲԲ Ընկերության ղեկավարության կողմից կայացրած որոշումները և հրամանները կապված ընկերության ֆինանսական գործունեության հետ բխում են ԼՂՀ Կառավարության որոշումներից, ինչպես նաև ԼՂՀ գործող օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից:



Աուդիտոր

Տնօրեն

07.05.2009թ.

Սևրոբե
Սևրոբե

Յա. Աթոյան

Ս. Ղևորգյան